

ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ, ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Արտաքին կապերի ոլորտում 2014թ-ի տարվա ընթացքում Լոռու մարզպետարանի աշխատակազմի կատարած աշխատանքների վերաբերյալ

h/h	Աշխատանքի ուղղությունը	Միջոցառման անվանումը		Միջոցառումների ժամկետները		Աշխատանքի կատարման արդյունքները
		Նախարեսված	Չնախարեսված, սակայն փաստացի կատարված	Նախարեսված	Փաստացի	
	1	2ա	2բ	3ա	3բ	4
	Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով կամ օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների հետ համատեղ իրականացվող ծրագրերով՝ մարզպետարանի իրավասության ոլորտներին վերաբերող դրույթների և/կամ այլ փաստաթղթերի կատարում	Հայ-Գերմանական համագործակցության շրջանակներում KFW գերմանական վարկային ծրագիր		2014թ	2014թ տարվա ընթացքում	«Լոռի-ջրնուղկոյուղի» ՓԲԸ-ի կողմից սպասարկվող համայնքներում ջրամատակարարման համակարգերի բարելավման համար ծրագրի կողմից նախատեսվել էր 1 մլրդ 442 մլն 423 հազ. դրամ, որից իրականացվել է 1 մլն 952.13 մլն դրամի աշխատանքներ:
«Ասիական բանկ» վարկային ծրագիր			2014թ	2014թ տարվա ընթացքում	«Հայջրնուղկոյուղի» ՓԲԸ-ի սպասարկման տարածքում գտնվող 38 համայնքներում խմելու ջրի մատակարարման եւ ջրահեռացման համակարգերի բարելավման համար նախատեսվել էր 2 810.0 մլն դրամ, իրականացվել են 1 918.2 մլն դրամի աշխատանքներ	
Քաունթերփարթ ինթերնեշնլ Հայաստան (USAID)			2013-2014թթ	2014թ տարվա ընթացքում	Կազմակերպությունն ավարտել է իր գործունեությունը, 1-ին կիսամյակում ավարտին է հասցրել Լոռու մարզի 7 քաղաքային եւ գյուղական համայնքներում թերի մնացած աշխատանքները:	
ՄԱԿ-ի արդյունաբերական զարգացման կազմակերպություն			2013-2014թթ	2014թ տարվա ընթացքում	UNIDO-ն (ՄԱԿ-ի արդյունաբերական զարգացման կազմակերպություն)՝ Ավստրիայի կառավարության ֆինանսական աջակցությամբ, Լոռու և Շիրակի մարզերում իրականացնում է «Աջակցություն Հայաստանի երիտասարդության ձեռնարկատիրության զարգացմանը» պիլոտային ծրագիրը: Լոռու մարզում կազմակերպվել են 4 CEFЕ մեթոդոլոգիայով դասընթացներ, որոնց արդյունքում լավագույն 11 բիզնես ծրագրեր վարկավորվել են, 16-ը ընթացքի մեջ են, 5 հոգի հրաժարվել են ֆինանսական աջակցությունից:	
	«Վորլդ Վիժն Ինթերնեշնլ» ՄԲԿ Հայաստանյան մասնաճյուղ				2014թ 1-ին կիսամյակ	Մարզում գործող երկու գրասենյակների միջոցով իրականացվել են ավելի քան 100.04 մլն դրամի աշխատանքներ, որից՝ <ul style="list-style-type: none"> • Ալավերդու գրասենյակի միջոցով Թումանյանի տարածաշրջանի 10 քաղաքային եւ գյուղական համայնքներում իրականացվել են՝ 35.114 մլն դրամ • Ստեփանավանի գրասենյակի միջոցով՝ Ստեփանավանի եւ Տաշիրի տարածաշրջանների 20 համայնքներում՝ 40.79 մլն դրամ • Մարդասիրական օժանդակության բաշխում՝ 23.68 մլն. դրամ Մարզպետարանի եւ կազմակերպության համագործակցությամբ կազմակերպվել են երկու համաժողովներ, նվիրված Լոռու մարզում զբոսաշրջության զարգացմանը:

		Հայ -Շվեցարական Դիվանագրական հիմնադրամ			2014թ տարվա ընթացքում	<p>Կազմակերպությունը իրականացրել է բարեգործական եւ տնտեսության զարգացմանն ուղղված շուրջ 73.0մլն. դրամ արժողությամբ ծրագրեր, այդ թվում՝</p> <ul style="list-style-type: none"> • Մարզի մի շարք համայնքներում սոցիալապես անապահով ընտանիքներին հունվարին տրվել է սնունդ, Վանաձորից թվով 41 երեխաներ հանգստացել են 'Գուգարք' ճամբարում • Արջուտ համայնքում շարունակվել եւ Լորուտ համայնքում ներդրվել է մեղվաբուծության ծրագիր • Թումանյան համայնքում նախաձեռնվել է կարի արտադրամաս 12 աշխատատեղով • Լուսադբյուրում՝ 10ընտանիքի համար ծառատունկ, Արծնիում՝ 3 ընտանիքի համար կարտոֆիլի, Սարամեջում՝ գարու ծրագրեր, Ջիլիզայում՝ 2 ընտանիքի տրամադրվել են 11 գլխաքանակ ոչխարներ • Ախթալայում կառուցվել է մոտ 2կմ երկարությամբ ջրագիծ • Սպիտակի գիշերօթիկ դպրոցի 3սենյակների վերանորոգվել են, տրամադրվել է անկողնային պարագաներ, գույք • Դսեղի բժշկական կենտրոնին սարքավորումների եւ համակարգիչների տրամադրում • մարզի համայնքների անապահով ընտանիքների 41 երեխայի համար կազմակերպվել է ամառային հանգիստը
<p>Օտարերկրյա պետությունների տարածքային միավորների հետ համաձայնագրի կամ այլ փաստաթղթերի /ծրագրերի կնքում և կատարում</p>	<p>Համագործակցություն Լոռու մարզպետարանի եւ Ֆրանսիայի Պրովանս Ալպ Կոտ դ'Ազյուր մարզի Ջինվորական եւ Հյուրընկալ Երուսաղեմի Սուրբ Ղազար Միաբանության միջեւ</p>		<p>Պրովանս կոտ Դ'Ազյուր առաջնորդ ական կարգադրու թյուն N09- 01-2013թ</p>	<p>2014թ տարվա ընթացքում</p>	<p>Սպիտակ քաղաքում 2009թ-ից ստեղծված է «Երուսաղեմի բժշկական Սուրբ Ղազարի օրդենը Հայաստանում» կոմիտեի աջակցությամբ մարզի առողջապահական հիմնարկների հետ շարունակվել են իրականացվել բարեգործական ծրագրեր, մատակարարելով՝ դեղորայք եւ բժշկական պարագաներ և գույք է հատկացրել մարզի մի շարք բուժիաստատությունների:</p>	
		<p>Հայաստանի մանուկներ հիմնադրամ (COAF) բարեգործական կազմակերպության հետ համագործակ- ցություն</p>		<p>2014թ հուլիսից</p>	<p>Ակտիվ համագործակցություն է սկսվել այս հիմնադրամի հետ: Հիմնադրամի եւ Վիվա Սել ՄՏՍ-ի աջակցությամբ Թումանյան եւ Դսեղ համայնքներում հիմնադրեց ստեղծագործարաններ՝ ժամանակակից կրթական պահանջներին համապատասխանող կրթասրահներ, որոնց պաշտոնական բացման արարողությունները տեղի ունեցան դեկտեմբերի 17-ին:</p>	
	<p>Համագործակցություն Բելառուսի Հանրապետության Վիտեբսկի շրջանի և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի միջև</p>		<p>2012թ</p>	<p>2014թ. տարվա ընթացքում</p>	<p>«Բելառուսի Հանրապետության Վիտեբսկ քաղաքի և ՀՀ Լոռու մարզի Վանաձոր քաղաքի միջև համագործակցության Համաձայնագրի շրջանակներում հուլիսին բելառուսական կողմի հրավերով Վանաձորի քաղաքապետարանի ներկայացուցիչների այց Վիտեբսկ, քաղաքի տոնին մասնակցելու առիթով:</p>	

		ԵԱՀԿ Երեւանյան գրասենյակի, ՀՀ բնապահպանության նախարարության եւ Լոռու մարզպետարանի միջեւ կնքված փոխըմբռնման հուշագիր		2011թ	2014թ. տարվա ընթացքում	Հուշագրի շրջանակներում իրականացվում են մարզի բնապահպանական կարևոր խնդիրների քննարկումներ, հասարակական լուսմեր մարզպետարանում և մարզում գործող երեք բնապահպանական տեղեկատվական Օրհուս կենտրոններում (Վանաձոր, Ալավերդի, Ստեփանավան):
		Լոռու մարզը որպես Եվրոպական Ռեգիոնների Ասամբլեայի լիիրավ անդամ		2011թ	2014թ տարվա ընթացքում	Էլեկտրոնային փոստի միջոցով շարունակվել է Եվրոպական Ռեգիոնների Ասամբլեայի գրասենյակի հետ կապը, իրականացվել են անհրաժեշտ տեղեկատվության փոխանակումներ
		Ֆրանկոֆոն Ռեգիոնների Ասոցիացիայի լիիրավ անդամ		2011թ նոյեմբերի 13	2014թ տարվա ընթացքում	Հայաստանում «Ֆրանկոֆոնիայի օրեր» ծրագրի երկամյակի շրջանակներում, մարտ ամսից Լոռու մարզի դպրոցներում, բարձրագույն ուսումնական հաստատություններում (Եվրոպական տարածաշրջանային ակադեմիայի Վանաձորի մասնաճյուղ, Վանաձորի մանկավարժական ինստիտուտ) կազմակերպվել են Հայաստանում ֆրանկոֆոնիայի օրերին նվիրված միջոցառումներ: Մարզային ԳԱԼԱ միջոցառման համար իրականացվեցին բավականին աշխատանքներ մարզի քաղաքային համայնքների մասնակցությամբ, սակայն այն հետաձգվեց անորոշ ժամանակով:
		Լոռու մարզպետարանի եւ Ֆրանսիայի Պրովանս-Ալպ Կոտ դ'Ազյուրի մարզի միջեւ Համագործակցության շրջանակային պայմանագիր		2012-2014թթ.	2014թ տարվա ընթացքում	2012-2014թթ-ի համաձայնագրի շրջանակներում նախատեսված ծրագրերի իրականացման ամփոփ տարին էր: Համաձայնագրով նախանշվել էր 175.0հազ. եվրո ներդրումներ Լոռու մարզում, որին մարզպետարանը հանդես եկավ որպես հավասար գործընկերոջ դերում եւ կատարեց համաֆինանսավորումներ, ՀՀ կառավարության աջակցությամբ 2013թ-ին՝ 11մլն դրամ անասնաբուծության եւ տուրիզմի, 2014թ-ին՝ (5-րդ հրատապ) 3մլն դրամ տուրիզմի ծրագրերի իրականացման համար: Նախատեսված ծրագրերի փուլերն հաջողությամբ իրականացվեցին: Այդ թվում՝ 1. Տուրիզմի բնագավառ ✓ Ֆրանսիական գործընկերն է Օտ Տեղ Դը Պրովանս կազմակերպությունը: 2014թ-ի ընթացքում կազմակերպության կողմից իրականացվել է 3 այց Լոռու մարզ ✓ Կառավարության աջակցությամբ (5-րդ հրատապ ծրագրի շրջանակներում) հիմնանորոգվեց Ալավերդու «Թումանյան աշխարհ» զբոսաշրջության կենտրոնը, ունենք առայժմ 1 նոր աշխատատեղ ✓ Ֆրանսիական գործընկերոջ փորձագետների կողմից շահառու 7 համայնքների 11 ներկայացուցիչներ վերապատրաստվել են որպես գիդ-ուղեկցողներ, ✓ Պատրաստվել է http://www.toumanian-lori.com/ զբոսաշրջության կենտրոնի քառալեզու (հայերեն-ֆրանսերեն-անգլերեն-ռուսերեն) ինտերնետային կայքը, այն հասանելի է համացանցում, որոշ աշխատանքներ կան անգլերեն եւ ռուսերեն էջերի թարգմանությունների հետ կապված ✓ Մշակվել է զբոսաշրջության կենտրոնի լոգոն, ազմվել են տուրիստական երթուղիներ, տուր-օպերատորներին առաջարկելու համար

					<ul style="list-style-type: none"> ✓ Պատրաստվել է երկվեզու (հայերեն-ֆրանսերեն) տեղեկատվական գրքույկ-ուղեցուց, որը տպագրվում է Ֆրանսիայում ✓ Ծրագրի իրականացման հաջորդ փուլերի համար կազմվել է գործողությունների պլան <p style="text-align: center;">2. Անասնաբուծության բնագավառ</p> <ul style="list-style-type: none"> ✓ Ֆրանսիական գործընկերն է ՊԱԿԱ-ի Անասնաբուծության Ռեգիոնալ Պալատը: 2014-ին իրականացվեցին կազմակերպության կողմից 2 այց Լոռու մարզ ✓ մարտին կայացավ Լոռու մարզի մասնագետների ճանաչողական այց Ֆրանսիա ✓ կազմվել է Լուսադայուրի ոչխարաբուծության համար նախատեսված անասնագումի հիմնանորգման նախագծա-նախահաշիվը ✓ աշխատանքային խումբն իրականացրել է փորձարկումներ նորածին գառների պահվածքի եւ կերակրման (զուգահեռաբար ավանդական եւ ֆրանսիական մեթոդներով) ✓ կատարվել է ոլորտի SWOT վերլուծություն, ըստ կարիքների գնահատման մշակվել է գործողությունների պլան ծրագրի հետագա աշխատանքների իրականացման համար <p style="text-align: center;">3. Ագրոտուրիզմի բնագավառ</p> <ul style="list-style-type: none"> ✓ Ֆրանսիական գործընկերն է ԿՐԻՊՏ կազմակերպությունը, որի կողմից իրականացվել են 2 այցեր Լոռու մարզ, ✓ Ագրարային համալսարանի մասնակցությամբ իրականացվել է վերլուծություն ՀՀ-ի կրթական համակարգի եւ գյուղական տնտեսությունների կապը, նպատակը ագրոտուրիզմի համար մոդուլային ուսուցման ծրագրերի պատրաստում ըստ կարիքների ✓ մշակվել էր Լոռու մարզում ագրոտուրիզմի զարգացման ծրագրի պլան, որը թեւեւ հավանության չարժանացավ ամբողջությամբ, այն կլրամշակվի եւ հետ կուղարկվի Լոռի-ՊԱԿԱ-համագործակցության շարունակության համար մշակվել են 2015-2017թթ.-ին համագործակցության համաձայնագրի նախագիծը, նախանշվել բնագավառները եւ ֆրանսիական կողմը կրկին պատրաստ է ներդրումներ իրականացնելու մոտ 451.0հազ.եվրո: 2015-ի տարեսկզբին համաձայնագրի նախագիծը, համաձայն Ֆրանսիայի Հանրապետության օրենսդրության, կղրվի քվեարկության ՊԱԿԱ-ի ռեգիոնալ խորհրդում, այն հաստատվելուց հետո կիտեւի 2015-2017թթ. համաձայնագրի կնքում, այս անգամ Լոռու մարզում, կհյուրընկալվի Պրովանս Ալպ Կոտ Դ'Ալպուր ռեգիոնի խորհրդի նախագահ Միշել Վոզելը: 	
			Բանյո-Վանաձոր քույր քաղաքների համագործակցություն	2014թ տարվա ընթացքում	<p>Ֆրանսիայի Պրովանս-Ալպ Կոտ դ'Ալպուրի մարզի և Բանյո քաղաքի համատեղ ֆինանսավորմամբ «Նոենի» ՀԿ-ի կողմից իրականացվել է Վանաձորի քաղաքի 4 պոլիկլինիկաներում, Վանաձորի մանկատանը և երեխաների խնամքի կենտրոնում և ADBB մայրերի ինքնաջակցման խմբերի, խորհրդատվությունների, հոգեշարժողականության խմբերի կազմակերպում, «Փոքրիկ նապաստակ» ծրագրի իրականացում, մանկապարտեզներում հոգեշարժողականության և այլ տիպի աշխատանքների իրականացում</p>	
			Վրաստանի Աջարիայի Ինքնավար Հանրապետության	2013թ.	2014թ հոկտեմբերի 6	<p>Պաշտոնական այցի նպատակը Լոռու մարզի (ի դեմս Լոռու մարզպետ Ա.Նալբանդյանի) եւ Աջարիայի (ի դեմս կառավարության ղեկավար Ա.Խաբաձեի) միջեւ համագործակցության վերաբերյալ Շրջանակային պայմանագրի կնքում:</p>

			կառավարության ղեկավար Արչիլ Խաբաձեի այց Լոռու մարզ			Այցի ընթացքում մարզպետի ուղեկցությամբ հյուրերը մասնակցեցին Ստեփանավանի տարածաշրջանում կազմակերպված «Բերքի տոն 2014» ամենամյա միջոցառմանը
	<p>Աշխատանքային, ուսուցողական, ճանաչողական այցեր օտարերկրյա պետությունների տարածքային միավորներ և միջազգային կազմակերպություններ, մարզ այցելող օտարերկրյա պետությունների տարածքային միավորների, միջազգային կազմակերպությունների պաշտոնատար անձանց ընդունում և ձեռք բերված պայմանավորվածությունների իրականացում</p>		Ֆրանսիայի Հանրապետության ն Ռիոն Ալպ Ռեգիոնի ներկայացուցիչներ Էդուարդ Սիմոնյանի, Աննա Ֆիորինի եւ այլ պաշտոնատարների այց Լոռու մարզ		2014թ նոյեմբերի 3	Պաշտոնական հանդիպում մարզպետ Ա.Նալբանդյանի հետ, որը որոշ առումներով քաղաքական էր: Հիմնական նպատակը, համայնքների համար տնտեսական շահ ստեղծելն էր: Քննարկվեց երկու մարզերի համագործակցության շարունակության ապահովումն էր, հետագա ծրագրերի ուրվագծում:
			Լոռու մարզպետ Ա.Նալբանդյանի այց Գերմանիայի Դաշնություն		2014թ սեպտեմբերի 29-ից հոկտեմբերի 1	Գերմանական KFW բանկի կազմակերպած «Քաղաքային կայուն զարգացում Հարավային Կովկասում - Դեպի որակական աճ» կոնֆերանսին մասնակցելու համար ՀՀ ՏԿԼ-ի տեղակալ Բախշյանի գլխավորած պատվիրակությունը մեկնեց Գերմանիա: Պատվիրակության կազմում ընդգրկված էր Լոռու մարզպետը, Վանաձորի քաղաքապետն ու տեղակալը, մարզից այլ պաշտոնական անձինք:
			Եվրոպական խորհրդի դեսպան Տրայան Հրիսթեայի եւ Չեխիայի Հանրապետության փոխդեսպան Անի Շագինյանովայի այցը Լոռու մարզ		2014թ դեկտեմբերի 1	Հանդիպում Լոռու մարզպետ Ա.Նալբանդյանի հետ: Այցի նպատակը՝ Լոռու մարզում ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող ներդրումային ծրագրերի ներկայացումն էր: Որոշ ծրագրեր արդեն իսկ տեսանելի արդյունք ունեն և խոստումնալից հեռանկար են ենթադրում: Խոսեցին այդ ծրագրերի նախնական արդյունքների ու համագործակցային հետագա պլանների մասին:
			Եվրահանձնաժողովի ներկայացուցիչներ, փորձագետներ ժակլին Դելավյուին և Էլեն Իսպիրյանի այցը Լոռու մարզ		2014թ. նոյեմբերի 27	Հանդիպում Լոռու մարզպետ Ա.Նալբանդյանի հետ: Այցի նպատակը Եվրամիության հանձնարարությամբ Հայաստանում սոցիալական ծառայություններ իրականացնող կառույցների գործունեության ուսումնասիրությունն էր: Հետազոտության արդյունքում փորձագետները եզրակացություններ և առաջարկություններ պետք է ներկայացնեն Եվրամիությանը՝ Հայաստանում սոցիալական ոլորտում նոր ծրագրեր իրականացնելու համար:
			Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների հանձնակատարին Նիլս Մուժնիեկսու գլխավորած պատվիրակու-		2014թ. հոկտեմբերի 8	Հանդիպում Լոռու մարզպետ Ա.Նալբանդյանի հետ: Ներկա էին նաև Լոռու մարզպետարանի պաշտոնյաներ, հյ-ների ներկայացուցիչներ: Այցի նպատակը, դիտարկել Հայաստանում դատական համակարգի բարեփոխումների, կանանց և տղամարդկանց իրավահավասարության ու ընտանեկան բռնությունների դեմ պայքարի ուղղությամբ տարվող գործընթացներին մայրաքաղաքում եւ թե ինչ քայլեր են իրականացվում մարզերում

			թյան այցը Լոռու մարզ			առկա խնդիրների հարթահարման ուղղությամբ:
		Ֆրանսիական Ռիոն Ալպի քայարշավորդների դեպարտամենտի ներկայացուցիչների այց Լոռու մարզ		2013-2015թթ.	2014թ. տարվա ընթացքում	Մի քանի աշխատանքային այցեր Լոռու մարզ: Նպատակը՝ էր շարունակել Լոռու մարզի տուրգրաֆիկ և ինֆոգրաֆիկ քարտեզագրումը: Տեղի մասնագետների համատեղ աշխատանքների արդյունքում իրականացվել է Ստեփանավանի տարածաշրջանում քարտեզագծում, մշակվել են 2 երթուղիներ մոտ 15-17կմ երկարությամբ: Կազմակերպվել են համատեղ քննարկումներ եւ աշխատանքներ են իրականացվել գիղ ուղեկցողների վերապատրաստման ազգային կենտրոնի ստեղծման ուղղությամբ, որի հիմնական կրողները կլինեն Եվրոպական Տարածաշրջանային Ակադեմիայի Վանաձորի մասնաճյուղը եւ Ստեփանավանի ճգնաժամային կառավարման կենտրոնը, քննարկվել է գիղերի վերապատրաստման մոդուլների բովանդակության եւ դասընթացների կազմակերպչական որոշ հարցեր
		Ֆրանսիական Ռիոն Ալպի ֆինանսական աջակցությամբ իրականացվող ծրագիր			2014թ. տարվա ընթացքում	Շարունակվել է Օձունում եւ հարակից գյուղերում խոտաբույսերի կոոպերատիվի ստեղծում, տեղական արտադրանքի եւ պատմամշակութային ժառանգության արժեվորում, ագրոտուրիզմի խթանում ծրագիրը: Ֆրանսիական գործընկերն է G2IA կազմակերպությունը: 'Լոյս' հիմնադրամի հետ կրկին կազմակերպվեց 'Օձունի գանձեր' 'Ամենամյա միջհամայնքային հանդիպում' փառատունը, որի գործընկերն այս տարի ՀՀ էկոնոմիկայի նախարարությունն էր: Ծրագրի շրջանակներում Լոռու մարզի Օձուն, Արեւածագ եւ գյուղական համայնքների ղեկավարներ ճանաչողական այցով մեկնեցին Ֆրանսիա:
		ՀՀ-ում Մեծ Բրիտանիայի Միացյալ թագավորության համատեղ դեսպան Քեթրին Ջեյն Լիչի այցը Լոռու մարզ		2014թ.	2014թ.-ի հունիսի 5	Աշխատանքային այց Լոռու մարզ: Մարզպետ Ա.Նալբանդյանի հետ հանդիպման ընթացքում քննարկվեցին առաջիկա տարիներին մարզում իրականացվելիք ծրագրերի ու հատկապես մարզի զարգացման համար զբաղակա ուղղություններ համարվող հանքարդյունաբերության, գյուղատնտեսության և տուրիզմի բնագավառներում կատարվող ձեռնարկումների մասին: Դեսպանին հետաքրքրված էր հանքարդյունաբերության ուղեկցմամբ ընթացող բնապահպանական խնդիրների լուծման պրոցեսը եւ նշվեց, որ դեսպանությունը պատրաստ է աջակցելու հանքարդյունաբերողների և հկ-ների միջև համագործակցությանը:
		Գերմանիայի դաշնային կառավարության աջակցությամբ «Գերմանական ծրագիր Կովկասում» ծրագրի պատասխանատու ների այցը Լոռի			2014թ. –ի մայիսի 20	Հանդիպում Լոռու մարզպետ Ա.Նալբանդյանի եւ Գերմանիայի դաշնային կառավարության աջակցությամբ «Գերմանական ծրագիր Կովկասում» ծրագրի պատասխանատու Բետտա Մյուլլերին եւ Հայաստանի գործատուների միության ներկայացուցիչների միջև: Հանդիպման նպատակը ծրագրի շրջանակներում ստեղծված միության առաջին մասնաճյուղի աշխատանքների ներկայացումն էր:
		«Ռոսհամագործակցության» հայաստանյան ներկայացուցչության ղեկավար Մարկ Կալինինի			2014թ –ի մայիսի 6	Հանդիպում Լոռու մարզպետի հետ: Տեղեկացվեց, որ «Ռոսհամագործակցությունը» համատեքստ (կոնցեպցիա) է մշակում ՌԴ և Հայաստանի մարզերի միջև համագործակցությունն առավել արդյունավետ և փոխշահավետ դարձնելու համար: Այդ նպատակով նախատեսվում է կնքել միջոցառումներ համագործակցության համաձայնագրեր: Համաձայնագրով նախատեսվում է պայմանագրի կնքում Լոռու մարզպետի և «Ռոսհամագործակցության» հայաստանյան ներկայացուցչության

			այցը Լոռի			ղեկավարի միջև, որի արդյունքում փոխշահավետ գործակցություն կծավալվի Լոռու մարզի և ՌԴ որևէ մարզի միջև:
			ՀՀ-ում Ղազախստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Այինդոս Բոզժիգիտովի գլխավորած պատվիրակության ն այց Լոռու մարզ		2014թ ապրիլի 10	Հանդիպում Լոռու մարզպետ Ա. Նալբանդյանի հետ: Դեսպանի այցը ճանաչողական էր, այն նպատակ ուներ բարեկամական կապերի հաստատման եւ առաջիկայում փոխհամագործակցության հնարավոր ծրագրերի իրագործման նպատակով:
			Լոռու մարզի եւ Վրաստանի Աջարիայի հինքնավար Հանրապետության համագործակցություն		2014թ ապրիլի 10	Աջարիայի հայ համայնքի ու նրա «Աղբյուր» պարբերաթերթի 20-ամյակին նվիրված միջոցառումների շրջանակներում Վանաձորի քաղաքապետարանի հրավերով ապրիլի 10-ին Լոռու մարզկենտրոնում էր բաթումահայերի պատվիրակությունը՝ Գրիգորի Վարդանյանի գլխավորությամբ, նպատակը՝ Բաթումիի հայ համայնքի և Վանաձորի ֆուտբոլային թիմերի միջև ընկերական ֆուտբոլային հանդիպման անցկացումն էր, ինչպես նաև այցելություն մշակութային օջախներ: Օգտվելով այցի առիթից՝ Գրիգորի Վարդանյանը և Աջարիայի հայ համայնքի մամլո քարտուղար, «Աղբյուր» թերթի խմբագիր Արթուր Հովհաննիսյանը հյուրընկալվեցին Լոռու մարզպետ Ա. Նալբանդյանի մոտ: Երկու կողմերի միջև բարեկամական կապերի ամրապնդման գործում ունեցած ակնառու ներդրման և Աջարիայի հայկական համայնքի 20-ամյակի կապակցությամբ Գ. Վարդանյանը մարզպետին պարզևատրեց Աջարիայի հայ համայնքի պատվոգրով:
			Հայաստանում Իրանի Իսլամական հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Նորին գերագանցություն Մուհամմադ Ռեյխիին այց Լոռու մարզ		2014թ փետրվարի 27	Հանդիպում Լոռու մարզպետ Ա.Նալբանդյանի հետ: Այցի նպատակը ճանաչողական էր՝ մարզի տնտեսական հնարավորությունների ծանոթացում, առաջիկայում փոխհամագործակցության հնարավոր ծրագրեր իրագործելու նպատակով : Դեսպանին ուղեկցում էր դեսպանության առևտրի կցորդ Համայակ Ավետիսյանը:
			ՀՀ ԿԳ նախարարության, Հայաստանում Ֆրանսիայի դեսպանության և «ԳԻԵՖ» կազմակերպության միջև 2008 թվականին ստորագրված եռակողմ համագործակցության պայմանագրի շրջանակներում	2008-2012	2014թ տարվա ընթացքում	Շարունակվել է «ԳԻԵՖ» թոշակառու մանկավարժների ֆրանսիական կազմակերպության առաքելությունը Լոռու մարզում, որի ներկայացուցիչն իրականացնում է ՎՊՄԻ-ի, ԵԿՏԱ-ի Վանաձորի մասնաճյուղի եւ «Մխիթար Գոշ» հայ-ռուսական համալսարանի ֆրանսերեն դասավանդող դասախոսների, ինչպես նաև, Վանաձոր, Ստեփանավան եւ Ալավերդի քաղաքների դպրոցներում ֆրանսերեն լեզու դասավանդող ուսուցիչների վերապատրաստման դասընթացներ

		<p>ԵՄ Արևելյան գործընկերության տարածաշրջանային համագործակցության ամրապնդմանն ուղղված քայլեր Հայաստան-Վրաստան տարածաշրջանային համագործակցության ծրագիր»</p>		<p>2013թ</p>	<p>2014թ տարվա ընթացքում</p>	<p>Մայիսի 3-ին Վրաստանի Հարանպետության Թբիլիսի քաղաքում տեղի ունեցավ «Արևելյան գործընկերության տարածաշրջանային համագործակցության ամրապնդմանն ուղղված քայլեր Հայաստան-Վրաստան տարածաշրջանային համագործակցության ծրագիր»-ով նախատեսված գործառնական ծրագրի ներկայացումը: Հայկական պատվիրակությունը ղեկավարում էր ՀՀ ՏԿ 1-ին փոխնախարար Վ.Տերտերյանը: Համաձայն ծրագրի ընթացակարգի կազմվեց ծրագրերի ընդունման հանձնաժողով, որտեղ ընդգրկված են երկու երկրների 9-ական ներկայացուցիչներ, այդ թվում Լոռու, Շիրակի եւ Տավուշի մարզպետարանների ներկայացուցիչներ:</p> <p>Հունիսի 20-ին Դիլիջան քաղաքում տեղի ունեցավ ծրագրերի ընդունման հանձնաժողովի 2-րդ նիստը, որտեղ ներկայացվեց ծրագրային փաթեթների ընդունման կարգը եւ ծրագրերի ընդունող հանձնաժողովի գործառնականները:</p> <p>Հուլիսի 4-6 Թբիլիսի քաղաքում տեղի ունեցավ կոնֆերանս Արևելյան գործընկերության 6 երկրների մասնակցությամբ, որտեղ մեկնարկվեց Հայաստան-Վրաստան ծրագիրը: Պաշտոնական արարողությանը ներկա հայաստանյան պատվիրակության կազմում էին Լոռու մարզպետարանի ներկայացուցիչը:</p>
<p>Բազմակողմ այլ միջոցառումներ</p>		<p>ԵՄ ECORYS կազմակերպության տեխնիկական աջակցությամբ «Տարածաշրջանային կարողությունների կառուցման» ծրագրի ներկայացուցիչների այց Լոռի</p>		<p>2014-2018թթ</p>	<p>2014թ տարվա ընթացքում</p>	<p>Կազմակերպությունը տարվա ընթացքում կազմակերպել էր հանդիպումներ Լոռու մարզպետարանում, որին մասնակցում էին մարզպետարանի, համայնքների, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ: Հանդիպումների ընթացքում քննարկվել են մարզի հնարավոր զարգացման ուղիներն ու հեռանկարային ոլորտները: Սեպտեմբեր եւ նոյեմբեր ամիսներին կազմակերպվել են ուսուցողական սեմինարներ՝ ԵՄ դրամաշնորհային ծրագրերին դիմելու եւ դրանց համապատասխանելիությանը պահանջվող ԵՄ ձեռաչափերին:</p>
		<p>ԵՄ ֆինանսավորմամբ «Կանանց սոցիալ-տնտեսական հզորացում Հայաստանում» ծրագիր</p>		<p>2014թ.</p>	<p>2014թ տարվա ընթացքում</p>	<p>«Հայաստանի երիտասարդ կանանց ասոցիացիա» ՀԿ-ն Լոռու մարզում իրականացնում է ԵՄ ֆինանսավորմամբ «Կանանց սոցիալ-տնտեսական հզորացում Հայաստանում» պիլոտային ծրագիրը, որի շրջանակներում իրականացվել են Տեղական Տնտեսական Զարգացման (ՏՏԶ) 4 մոդելների ստեղծում (Շնող, Ախթալա, Ստեփանավան, Ալավերդի) եւ ձեռներեցության դասընթացների կազմակերպում, որի արդյունքում 6 կին շահառուներ լավագույն բիզնես ծրագրերի համար ստացել են դրամաշնորհներ:</p>
		<p>ԵՄ ֆինանսավորմամբ «Տուրիզմի ներդրումը ՀՀ մարզերում աղքատության նվազեցման գործում» ծրագիր</p>		<p>2013-2014թթ</p>	<p>2014թ 1-ին կիսամյակ</p>	<p>«Սոսե» բարեգործական հասարակական կազմակերպությունը դեռ 2013թ-ին Լոռու եւ Տավուշի մարզերում իրականացրել է հայկական տուրիստական կազմակերպությունների կողմից հայկական մշակույթի, արվեստի եւ խոհարարական ոլորտում պահանջարկված ապրանքների ու ծառայությունների պահանջարկի ուսումնասիրություններ, որոնք կարող են տրամադրվել տեղի բնակիչների կողմից: Կազմակերպվել են գիդ-ուղեկցողների, ծառայությունների բարելավմանն ուղղված դասընթացներ մարզի 5 համայնքների բնակիչների համար: Արդյունքում Լոռու մարզի Փամբակ համայնքում հունիսի ամսին հիմնվել է «Լոռվա Օրրան» հայկական մշակույթի, արվեստի եւ խոհարարության ժամանցային տունը:</p>
			<p>USAID - EDMC-Միլիենիում ՀԿ</p>		<p>2014թ տարվա ընթացքում</p>	<p>USAID-ի ծրագրով իրականացրեց տուրիզմի զարգացման ծրագիր ամբողջ հանրապետության տարածքով, այդ թվում նաեւ Լոռու մարզում: 20օր փորձագետները ուսումնասիրություններ կատարեցին մարզում, Թումանյան</p>

					աշխարհի զբոսաշրջության կենտրոնը ներգրավված էր այդ աշխատանքներում: Ծրագրի շրջանակներում կազմակերպվել են գիդերի 7օրյա եւ հյուրանոցային տնտեսությունների ծառայությունների մատուցման 4 օրյա վերապատրաստումներ: Տպագրվել են անգլերեն լեզվով ուղեցույցներ եւ քարտեզներ զբոսաշրջիկների համար:	
			Լոռու մարզպետարանի եւ Փրկեք երեխաներին միջազգային կազմակերպության միջեւ փոխըմբռնման հուշագրի կնքում	2014թ դեկտեմբեր	Կազմակերպությունը «Նախածեռնություն հանուն երեխայի առողջության և կրթության» ծրագրի երկրորդ փուլի իրականացման շրջանակներում ընդգրկեց Լոռու մարզից 3 համայնքներ՝ Շամլուղ, Ջրաշեն, Լեռնավան, որտեղ նախատեսվում են դպրոցահեն նախակրթարանների: Այս աշխատանքների իրականացման համար կազմակերպության եւ Լոռու մարզպետարանի միջեւ կնքվեց փոխըմբռնման հուշագիր:	
			ԱՌԴԱ՝ բարեգործական հիմնադրամի, Վանաձորի քաղաքապետարանի « Հայաստանի 'Ֆուլեր տնաշինական կենտրոն' ԲՀԿ-ի եռակողմ համագործակցություն	2008թ	2014թ սեպտեմբերի 13	Եռակողմ համագործակցության ու ֆինանսական ներդրումների շնորհիվ 2008թ-ից իրականացվում է ոչ երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած, ժամանակավոր կացարաններում ապրող ընտանիքներին աջակցելու ծրագիրը: Արդյունքում Վանաձորի Տարոն-3 թաղամասում 47 ընտանիք ապահովվել է բնակարանով, ևս 8 ընտանիքի համար կիսակառույց շինության հիմքի վրա ներկայում շենք է կառուցվում՝ նույն թաղամասում: Սեպտեմբերի 13-ին նշված շենքի շինարարությանը մասնակից դարձան նաև Լոռու մարզպետ Ա. Նալբանդյանը, Հայաստանում ԱՄՆ արտակարգ և լիազոր դեսպան Ջոն Ա. Հեֆերնն՝ իր ընտանիքով, Լիտվայի հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Էրիկաս Պետրիկասը, պաշտոնատար այլ անձինք: